

Ն Ե Ր Տ Ք Ի Ն Տ Ե Ս ՈՒԹ Ի Ի Ն

Կովկասի կառավարչապետի շրջաբերականը Կովկասի նահանգապետներին:

Ի կատարումն Բարձրագոյն հրամանների, որոնք տեղի են ունեցել 1901 թուի փետրուարի 1-ին և յուլիսի 26-ին՝ այն թիւրքահայտակ հայ փախստականների գրութիւնը կարգաւորելու հարցի մասին, որոնք զանազան ժամանակ, սկսած 1893 թուից, գաղթել են մեր սահմանները, առաջարկում եմ ձեր գերազանցութեան յայտնել ձեզ յանձնուած նահանգի (չրջանի) սահմաններում գտնուող հայ փախստականներին հետեւալը.

ա) Զանազան ժամանակներով, սկսած 1893 թուից, Կովկասեան երկրի սահմանները իրանց կառնով եկած թիւրքահայտակ հայերին, որոնք ցանկանում են կամաւորապէս իրանց հաշուով հեռանալ կայսրութիւնից, համապատասխան աջակցութիւն ցոյց կը տրուի այդ բանի համար:

բ) Մնացած այն բոլոր հայ-փախստականներին, որոնք չեն ցանկանայ գաղթել արտասահման, թոյլ է տրւում մնալ իրանց այժմեան ընտանի տեղում և գրուել զիւղական համայնքների վրայ, եթէ այդ բանին կը համաձայնուեն վերջինները (141—146 յօդ. IX հ. առանձին յաւելուածի), հակառակ դէպքում, 1899 թուի հրատարակութեան IX հատորի 564-րդ յօդուածի 9-րդ պարագրաֆի զօրութեամբ, նրանց թոյլ է տրւում գրուել մէջ-չանների (քաղաքային) հասարակութիւնների վրայ: Մի և նոյն ժամանակ վերոյիշեալ անձերից նրանք, որոնք կը ցանկանային ընտելութիւն հաստատել ներքին նահանգներում, թոյլ է տրւում, Ռուսաստանի հպատակութիւն ընդունելուց յետոյ, ճանապարհ ընկնել իրանց հաշուով երկաթուղիների էփանադրած սակազնով, իրանց ընտրած տեղերը, Կովկասեան երկրի դուրս, և այդպիսի անձանց առանց արգելքի կը տրուեն պատշաճաւոր անցագրեր:

գ) Թէ Կովկասեան երկրի սահմաններում մնացող և թէ ներքին նահանգները գնալ ցանկացող հայ-փախստականները

պարտաւոր են ոռոսաց հպատակութիւնը ընդունել. իսկ ոռոսաց հպատակութիւն ընդունել չը ցանկացողները պարտաւոր են անյապաղ հեռանալ ոռոսական կայսրութեան սահմաններից։ Մի և նոյն ժամանակ հայ-փախստականներին իրաւունք է տրուում այժմ և եթ Ռուսաստանի հպատակութեան մէջ մտնել, իբրև բացառութիւն 1899 թ. հրատ. 837 և 839 յօդուածներով։

դ) Հայ-փախստականները 1901 թուից ենթակայ են զինուորագրութեան կայսրութեան մնացած ազգաբնակչութեան նման։

ե) Գիւղացիների հողային բարեկարգութեան ժամանակ Կովկասում, ք. կէտում յիշած անձանց, եթէ նրանք կը վերաբնակուեն արդէն եղած գիւղերում, որոնք դեռ բարեկարգութիւն չունեն, իրաւունք չէ տրուում հողաբաժին ստանալ։

զ) Քաղաքներից դուրս անշարժ գոյքեր ձեռք բերելու իրաւունքը Կովկասում թոյլ է տրուում գաղթական հայերին կամ նրանց սերունդներին ոչ վաղ, քան նրանց ոռոսաց հպատակութիւն ընդունելուց քսան տարի անցնելուց յետոյ։

և է) Վերև բերած կանոնները տարածուում են այն փախստական հայերի վրայ, որոնք եկել են Կովկասի սահմանները մինչև 1901 թուի փետրուարի 1-ը. իսկ վերոյիշեալ ժամանակամիջոցից յետոյ եկածները դուրս են ուղարկուելու կայսրութիւնից։

Վերոյիշեալին կցում եմ, որ Բարձրագոյն հրամանը ի կատար ածելու կարգի մասին, հայ-փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի վերաբերմամբ, ես առանձին յուշմունքներ կը տամ ի ղեկավարութիւն։ Ստորագրեց՝ Սենատոր, գեներալ-ադիւտանտ իշխան Գօլիցին։